

մէկ ազգ մէկ ընկերութիւն . ուրեմն պէտք է որ մէկզմէկ սիրեն մէկմէկուօգուտը փնտռեն , պէտք է ձեռք տան մէկմէկու՝ որ աշխարհք ծաղկի , արհեստները կատարելագործուին և աղքատ ու տնանկ մարդիկն ալ հարստանան :

ՆԿԱՐԱԿՐ

Երկրորդ մարդ :

ԱՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ ըսելով չեմ իմանար մարդուս իր արդար շահը ըստ տեղւոյն փնտռելը , հապա ան ախար , որ ուղղակի դէմ է ընկերութեան , որով մարդ չէ թէ միայն առանց իր շահուն բարիք մը չուզեր ընել ուրիշի , հապա նաև ուրիշին փնտսովը՝ իր շահը կ'ուզէ առաջ տանիլ : Երկրորդ մարդուն համար՝ կարծես թէ ուրիշ մարդ չկայ աշխարհքիս վրայ , ամէն բանի մէջ զինքը կը փնտրուէ . զինքը կեդրոն մը կ'ընէ աշխարհքիս ամէն բաներուն , իբրև թէ ամէն արարած իրեն համար միայն ստեղծուած ըլլային , ամէնքը իրեն համար ապրէին , աշխարհք կործանի փոյթը չէ , բաւական է որ իր շահն ալ չկորսուի : Երկրորդ լեզու կը խօսի , ամէն կերպարան կը մտնէ , իր շահը չփնտռող ալ կը ձևանայ , բաւական է որ իր բանը առաջ տանի : Թէ որ մէկէն իրեն օգուտ մը չկայ , անպիտան մարդ է . մէկուն հետ բարեկամութիւն չընէր , թէ որ ծայրէն շահ մը չկայ . իր սրտին յարգն ալ չձանձնար , ոչինչ շահու համար կը ծախէ իր բարեկամութիւնը , իր սիրտը վարձու կուտայ : Երկրորդ վաճառանոց մը կը նմանի , շահէն առուտուրէն ուրիշ բան մը չպտտիր մտքին մէջը . թէ որ բարեկամը իրմէ շնորհք մը խնդրէ , ինքը փոխանակ մտածելու թէ կրնայ կամ չկրնար ընելու ան շնորհքը , կը մտածէ թէ ան բարեկամէն կամ ան շնորհքը ընելէն

իրեն օգուտ մը կայ թէ չէ , թէ որ կայ ալ՝ շահաւոր առուտուր է ընելու բարեկամութիւնը թէ չէ :

Երկրորդ սիրելի կարծուած բարեկամը հարուստ է , քովէն չգատուիր . վաղը աղքատնայ՝ քովը չհանդիպիր . ծաղիկներու քով պտրտող մեղուններուն կը նմանի , ծաղիկը թողմամբն պէս մէյմ՝ ալ չի մտենար : Երկրորդ երեսդ չինայիր , վաղը մեծցիր՝ քեզ տունն ալ կը հրաւիրէ : Երկրորդին վրայ պատմուածը առանց խելքի չէ , որ երբոր հասարակ զգեստով հրաւիրուած սեղանը գացեր է , բան մը հրամայող չէ եղած իրեն : Իսկ երբոր փառաւոր սամյը մուշտակը հագած գնացեր է ու հրամայող հրամայողի վրայ եղեր են , ինքն ալ մուշտակին կը հրամայէ եղեր , ինքն էլ ըսելով : Նաւանակն ալ երբոր հարսնիքի հրաւիրեր են , խելքով ըսեր է որ՝ կամ ջուրերնին պակաս է կամ փայտերնին :

Երկրորդ մարդուն սէրն ու բարեկամութիւնը ուրիշ բան չէ , բայց ինքը զինքը սիրել . շահու ու սիրոյ համար եղած բարեկամութիւններուն տարբերութիւնը թէ որ կ'ուզես իմանալ , անկէց իմացիր որ ճշմարիտ սիրողը՝ զինքը բարեկամին կը յարմարընէ , իսկ շահասէր մարդը իր բանին յարմար բարեկամ կը փնտռէ . ու թէ որ իր շահը անանկ բերելու ըլլայ , բարեկամութիւնն ալ կը ձգէ . անոր համար բարեկամութեան փորձաքար կը կոչուի շահը : Երկրորդսիրութեան համար կ'ըսեն իմաստունները՝ որ անդունդ մըն է , որչափ խորը մտնես , դեռ յատակը չես հասնիր . բայց շահասիրութիւնն ալ անձնասիրութենէ վար շմար , ու անկէց չգատուիր . վասն զի բայ՝ ի նիւթական շահէն՝ ուրիշ ամէն կիրք ալ իր մասը ունի շահասէր մարդուն գործողութեանցը մէջ : Երկրորդ բարիք մը կ'ընէ , որպէս զի անոր ներհակ եղող մարդուն գէմ ընէ . ողորմութիւն մը չընէր՝ ուր որ ուրիշները չեն տեսներ . առաքինութիւն մը չընէր՝ թէ որ անկէց իրեն գովութիւն մը չգայ : Երկրորդ հաւատարմի վաճակի բարեկամը է ,

քեզ կը բարևէ , քեզի հետ կը պագտուի . վաղը մեծցածին պէս՝ իրեն անարդու թիւն կը սեպէ զքեզ ճանչնալը . թէ որ զինքը բարևես , քովիններուն կը հարցնէ որ զինքը բարևողը ո՞վ է : Ի՞նչ պէս կ'ուզես որ քեզ ճանչնայ , երբոր մեծցածին պէս՝ զինքն ալ չճանչնար : Թէ որ իրմէ ուրիշը գովելու ալ ըլլայ , իր մարդ ճանչնալը երեցընելու , ու իր ճանաչողութեանը գովեստ ընդունելու համար է :

Շահասիրութիւնը ան տարերքներուն պէս է , որ ամէն բաղադրութեան մէջ կը գտնուին . իր շահը չփնտուելը առաքինութիւն մըն է՝ որ խիստ քիչ կը գտնուի , այնպէս որ՝ թէ որ յանկարծ մէկուն վրայ երևնայ , գէթ առջի բերանը կամ կեղծաւորութիւն և կամ վատութիւն կը կարծուի : Ի՞նչանկ ալ իր շահը փնտուելը մարդկանց մէջ հասարակ բան մըն է . անոր համար մարդուս մեծ գովութիւններէն մէկն է՝ շահասիրութենէ վեր ըսուիլը : Արչափ որ անխելք մարդ ըլլայ , իր շահին եկածին պէս՝ խորագէտ կ'ըլլայ . թէ որ չես կրնար բանի մը մէջ իր կարգէ դուրս խելք բանեցընելուն պատճառը մակաբերել , իմացիր որ մտածած բանին մէջը մասնաւոր շահ մը ունի : Շատ անգամ խորագէտ մարդկանց ալ՝ յայտնի բան մը չմտածելնին՝ անոր գէմ շահ մը ունենալնէն առաջ կուգայ . անոր համար շահասիրութիւնը կոյր կը կուտուի . շատ անգամ ալ մանր մունր շահերու ետեւէ ըլլալով՝ իր զխաւոր շահը կը կորսընցընէ :

Սերջապէս շահասէր մարդը իր առաքինութիւններն ալ , ուրիշի բարիքը ընելն ալ , աճուրդքի հանելու պէս կ'ընէ . ուր որ աւելի շահ կը գտնէ , հոն կը բանեցընէ . ո՞վ որ աւելի գին կուտայ՝ անոր կը ծախէ . ասանկով շահասիրութիւնը կ'ըլլայ ծով մը՝ որուն մէջը իր սմէն ըրած բարիքը՝ ամէն առաքինութիւնները գետերու պէս կը խառնուին ու կը կորսուին : Ար տեսնես բարեկամ մը քեզի ուրախակցութեան կուգայ՝ աղջիկդ մեծ մարդու հետ տեղա-

ւորելուդ համար . ետեւէն տեսնես որ փեսէդ իննդիրք մը ունի եղեր : Գլուխդ ողջ կենայ ըսելու կուգայ , հօրդ մահուանը վրայ զքեզ մխիթարելէն ետքը , մնաս բարով ըսելու ատենը՝ գիտնաս որ հայրդ ինծի քսան դուրուշ պարտք ունէր , մուրհակը քովս է կ'ըսէ . միտքէդ ինչ կ'ըսես , մխիթարելու համար եկած է , թէ իր ստակը ողջընցընելու : Շնորհաւորութեան գիր մը կը գրէ քեզի . ինչէն միտքը ինկեր եմ կ'ըսես , ու կը զարմանաս . մէյմըն ալ յետ գրութեանին մէջը կ'իմանաս որ ծառայութիւն մը ունի եղեր յանձնելու :

Սրտի փափկութիւն ու զգացմունք չունենալէն առաջ կուգայ աս պակասութիւնը . մէկ զգայուն մարդու մը ուրիշներուն բարիք ընելէն մեծ զուարճութիւն չկրնար ըլլալ : Սարդս ինչպէս իր տրամուծիւնը ուրիշի հաղորդելով՝ կը քիչցընէ , անանկ ալ իր երջանկութիւնը կ'եւելցընէ՝ բարեկամին ալ անկէց բաժին հանելով :

*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Խըբըմեան Ս անեցի Ս Կրտիչ Վարժապետին
Գովեստը մեր նախնեաց Գաղափարաբանը
Կորոճող Լափրատոանի Հ . Լճսէն
Ս արդապետին :

Ս ԻՐԳԻԼԻՈՍԻ Ս շակական երգերուն հայերէն թարգմանութեան հանդիպողը՝ յառաջաբանէն կ'իմանայ , թէ ո՞րն էր մեր նախնեաց ընտրած տաղաչափութեան ոճը , և թէ ինչպէս ետքերը թողլով անոնց ծանր չափը՝ աւելի թեթեւ և արաբացի նմանակերթութի կերպը մտաւ հայերէն դպրութեան մէջ . և թէ ո՞րչափ վայելուչ է մեզի դաունալ մեր նախնեաց ընտրած և փորձած քերդողական ճամբուն , երբ ջանք կ'ընենք անոնց հետեւիլ արձակ գը-